



ՀՀ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԿՆ՝ Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Շնորհավորում եմ. Սփյուռքի նախարարության հիմնադրման 2-ամյակի կապակցությամբ:

Շնորհիվ նախարար՝ Հրանուշ Հակոբյանի հմտության, կենսափորձի և կազմակերպչական հարցերում ունեցած բացառիկ վարպետության՝ անցյալ 2 տարվա ընթացքում ծավալած աշխատանքները հավասարազոր են գուցե 20 տարվա աշխատանքային գործունեության:

Հրանուշ Հակոբյանը ունի բնավորության գծեր, որոնց շնորհիվ մարդիկ արագ համոզվում են, որ դրված հանձնարարությունները բխում են ժամանակի պահանջներից և սիրով լծվում են գործին հարգանքով և մեծ պատասխանատվությամբ:


Կյանքը ցույց է տվել, որ եթե կա ղեկավարի նկատմամբ հարգանք՝ գործը արագ առաջ է գնում, իսկ եթե ոչ՝ տեղքայլ անելը ամենահեշտն է, բայց անպտուղ:

Հրանուշ Հակոբյանը Հայաստանում, Սփյուռքում և իր կոլեկտիվում վայելում է բացառիկ հարգանք, որի շնորհիվ այս կարճ ժամկետում արված մեծածավալ աշխատանքը ընկալվում է շատ դրական:

Սփյուռքի հայրենակիցներին կապել հայրենիքի հետ բավականին դժվար է, եթե հաշվի առնենք հատկապես սփյուռքահայերի խայտաբղետ վիճակը, որը պայմանավորված է տվյալ երկրների օրենքներով, սովորույթներով և մանավանդ կենցաղով, որոնք շատ տարբեր են միմյանցից, հետևապես սփյուռքում ապրող հայր տարբեր իշխանությունների ազդեցության տակ կազմավորվում է երբեմն իրարից խիստ տարբեր ձևով: Այդ բոլորին հարկավոր է հավաքել և կապել հայրենիքի հետ:

Այս 2 տարվա փորձը ցույց տվեց, որ այս առումով վիթխարի գործ է արված, բայց ինչքան էլ շատ են անելիքները:

Շնորհավորանքներով և լավագույն բարենաղթանքներով՝



Հովհաննես ՉեֆՉՅԱՆ